



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines


Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>



GRAD
EREN
424
BUHR

A

985,350



1. *Leucostoma* *luteum*

2. *Leucostoma* *luteum*

3. *Leucostoma* *luteum*

—

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

ԵՐԿՈՒ ԽԱՆԿԱԴԻՐ ՅԻշաւսկարանաց

ԱՆՁ ՖԱՌԱԳԵՎ

ԵԿ

ՀԱՄ-ՊԱՐԱՊ ՎԱՐԱՐԻՑ

Ի ՆԻԿՈՂՈՍ ՀՈՎՈՒԵԱԾ



Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Մ. ՏՆՏԵՍՆԵԱՆ

Սիհնապիլի խան. թիւ 47.

1880

UNIVERSITY OF LOS ANGELES LIBRARIES
LOS ANGELES, CALIFORNIA

684

ՊԵՐԱԿԱՆ, ԱԼԵՎԻՅԱՆ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵտարանի հայութեան


ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՒ ԽԱՆԿԱԴԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՑ

ԱՆՁ ՔԱՂՋԱՔ

ԵՒ

ՀԱՅ-ՊԵՐԱԿԱՆ ՎԱՐԱՐԻՑ



489.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Ս. ՏՆՏԵՍՍԵԱՆ

Սիրանակիլի խան. թիւ. 47.

1880



Grant


ERSON

424

AWARD

Ա Զ Դ

Մեր Բագրատունեաց թակաւորութեան Մայրաքաղաքն Անի՝ յետ անկմանն և դարաւոր ամայութեան, այժմ այնպիսի վիճակի մը ենթարկեալ է որ այն կողմերը այցելող հնախոյզ ճանապարհորդք որք մինչեւ ցարդ առ ա՞ի բանաւոր և անբան գաղանաց հազիւ ուրեմն կրնային հետազօտել զայն, այսուհետեւ ընդարձակ ասպարէզ և դիւրեւթիւն ունին նորա աւերակները խուզարկելու, հաւաքելու և 'ի լոյս ածելու անոր յիշատակարանները. ուստի այս տետրս որ նոյն քաղաքի երկու ծածկադիր յիշատակարանաց բացատրութիւնն է և 1853 ին հրատարակուած և սպառած է, և այժմու նոր գրագիտաց շատերուն անմատչելի է եղած, կրկին անգամ տպագրելու ձեռնարկեցինք խիստ սակաւաթիւ օրինակ, որպէս՝ հանրութեան և ամեն գրագիտաց ուշադրութեանն արժանի գործ, արդիւնք բարեյեշատակ Նիկողայոսի Հովուեան, որպէս զի այն կողմերը ճանապարհորդ ող և մեր երբեմն բարգաւաճ Մայրաքաղաքին հնութիւնները խուզարկող ազգայինք կարենան նորա յիշատակարաններուն սոյն ծածկաբանութեանց տեղեկանալ, և եթէ երբէք պատահին այսպիսի արծագրութեանց, ինչպէս որ յուսալի է ըստ այնմ փորձեն զանոնք վերծանել: Եւ եթէ այս բացատրութիւններն ոմանց անկատար ևս համարուին, գոնէ աւելի գոհացուցիչ լուծման մը կրնան առաջնորդել: Ցետրիս վերջն յաւելցուցինք նաև ուրիշ երկու ծածկագրութեանց օրինակներ, և համառօտ դիտողութիւն մը:




ԱՆԻ ՔԱՂԱՔԻ


ԱԼԵՐԱԿԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՂԱԾ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԸ

ԼՈՒՍԱՄՏՏԻՆ ՎՐԱՅԻ ԳՐԵՐՈՒՆ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Կարս քաղաքին Առաջնորդ Արժանապատիւ կարապետ վարդապետը 1847 ին Անի քաղաքի աւերակներուն մէջ Եկեղեցւոյ մը լուսամտին բոլորտիքը՝ քսանուչորս տառերէ բաղկացած՝ ծածկաբանութեան պատկեր մը գտաւ, որ շատ սքանչելի հանճարով շինուած է. և ո՛վ գիտէ մեր ազգային ճանապարհորդներէն քանի մարդտեսեր՝ ու բան մը չհասկնալով անհոգութեամբ թողեր գացեր են: Բայց այս Արժանապատիւ անձին շնորհակալ ըլլալու եմք, վասն զի մեր նախնեաց հանճարոյն յարդը լաւ ճանչնալով՝ 849 տարիէ ՚ի վեր մոռացութեան խաւարին մէջ թաղուած այս հնութեան մնացորդը օրինակեց՝ ու 146 թիւ Հայաստան լրագրոյն միջոցաւ հրատարակեց. որոյ իմաստին բացատրութեանը համար ալ կը խնդրէր՝ որ եթէ բանաէր մը իւր աշխատութեանը արժանի համարի ու բացատրէ՝ հրատարակել տայ: Ահա նոյն պատկերին ձեւը հոս դնելով կը բացատրեմք:

ՆԻԿՈՂՈՍ ՀՈՎՈՒԵԱՆ





Այս պատկերին մէջէն Ա. Գ. Բ. թ. Հ. Յ.
Յ. Հ. . . . Յ. այս տասը տառերը՝ ելելիք ի-
մաստին սկզբնատառերն են. և եօթն տառեր
ալ կան՝ որոնցմով ամբողջ (ԳՐԻԳՈՐԻ) անունը
կը բաղկանայ. և Ե. Յ. Մ. այս երեք տառերն
ալ՝ Փրկչին հազարերորդ թուականը կը ցուցը-
նեն, ($6=500+6=300+7=200=1000$), որով
առաջին իմաստը կ'ելլէ, ու Յ. Ա. Ո. Ո. այս
չորս տառերն ալ կ'աւելնան :

ԽՄԱՍՏ Ա.

Առաջին գաղիկ Բագրատունի թագաւոր Հայոց Յօրի-
նեաց Յանուն Արբոյ Հայրապետին ԳՐԻԳՈՐԻ, Յամի 1000-

Մասոն. Պատկերին մէջի պարասկ բոլորակը՝ լու-
ամուսնն է :

Այս իմաստին ստուգութեանը մեր Ազգ-
գային պատմիչները կը վկայեն .

« Զմեծաշէն եկեղեցին որ՝ի Քարուդաշտի՝
անուամբ սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ
և կործանեալ, կամեցաւ (Գագիկ) նոյնաձեւ չա-
փով և յօրինուածով յարդարել՝ի քաղաքն
Անւոյ, հիմնարկեալ՝ի կուսէ Ծաղկոցաձորոյն
՚ի բարձրաւանդակ տեղւո՞ն տարփատենչ տե-
սղացն . (Պոր) մեծատաշ վիմարդեան կոփածու
վիմօք մանուածոյ քանդակեալ յօրինէ, լուսան-
ցոյց պատուհանովք, երրակի գրամբք, սքան-
չատես տեսմամբ գմբեթաւորեալ, գունակ գե-
րամբարձ և երկնանման գնատին » : (Ասունէի. Գ. 47:
Տե՛ս և ՚ի Հին Հայուսու. Երես 421:)

« Սուրբ Գրիգորն գերահռչակ՝ զոր նախ
սկիզբն առնու ՚ի շինել թագաւորն Գագիկ ՚ի
յԱնի, ՚ի վերայ Ծաղկոցաձորոյն վայրիւք, գա-
ղափար առեալ զլուսապարդ զհրաշալի զսուրբ
Գրիգորն՝ զշինեալն ՚ի Ներսիսէ Հայրապետէ . և
կատարեաց զաստուածակերտ փարախն բանա-
ւոր հօտին Քրիստոսի, ՚ի հազարերորդի ամի
մարմնանալց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» :
(Ասունէւ Երեց Տե՛ս ՚ի Հին Հայուսու. Երես 422:)

« Սոյնպէս և արքայն Գագիկ յետ ամաց
ինչ շինեաց ՚ի յԱնի քաղաք եկեղեցի մեծ և
ահեղ՝ լուսազարդ և հրաշալի յամի Տեառն
4000, և ՚ի թուին Հայոց՝ Նիսթ, յանուն սըր-
բոյն Գրիգորի » : (Հ. Մէտ. Վ. Զահէնան. ՚ի Պատմ.
Հայոց. հատ. Բ. Եր. 872:)

Արդ. կը մնոյ աւելցած (Յ. Ո. Ո. Ո) չորս
տառերէն իմաստ հանել . ուստի ասիկայ ընելու
համար՝ նախ պէտք է գիտնալ որ ծածկաբա-
նութեան հեղինակը՝ երկու եղանակաւ իւր միտ-
քը հասկցուցերէ . առաջինը ելլելու իմաստին
սկզբնատառերը առնելով , ինչպէս որ վերը տե-
սանք , և երկրորդը՝ տառերը համրանքի փո-
խելով : Արդէն յայսնի է մեր հայկական տա-
ռերուն թուաննշանի կարողութիւն ունենալնին .
բայց նախնիք՝ այս ալ երկու եղանակաւ բա-
նեցուցերը են . առաջին եղանակը ինչպէս որ
մինչեւ ցարդ կը գործածեմք , վերէն դէպ՚ի
վար ուղղահայեաց գիմնղութեամբ իջնելով՝
աբէն մինչեւ նոն միաւոր , մէկզմէկէ մէկմէկ թիւ
աւեցընելով : Ճէն մինչեւ լոր՝ տասնաւոր ,
մէկզմէկէ տասնական թիւ աւելցընելով . ճէն
մինչեւ Ձն հարիւրաւոր , մէկզմէկէ հարիւրական
թիւ աւելցընելով : Ճէն մինչեւ Դն հազարաւոր ,
մէկզմէկէ հազարական թիւ աւելցընելով : Եւ
երկրորդ եղանակը՝ հորիզոնական դիմողու-
թեամբ՝ ձախէն դէպ՚ի աջը գալով հաշուեր
են . Ա Ժ Ճ Ռ Մ Հ Կ Ս Ե րկուքական .
Գ Լ Յ Վ Ե րեքական . Դ Խ Ն Տ չորսական .
Ե Ծ Շ Բ հնգական . Զ Կ Ո Ց վեցական . Ե Հ Չ Ի
եօթնական . Ը Զ Պ Փ ութնական . Թ Ղ Զ Ք ին-
նական . ըսել է որ մեր 36 տառերը այս դրու-
թեամբ՝ պարզ միաւորի ուժով կը բանին , և
նույն թիւէն անգին չեն անցնիր : Դիւրէն հաս-
լունակութանակը հետեւեալ ազիււակը դէլնք :

Ա. կարգի չորս տառերը	Ա. հայկական թագավորություն	Ակ թուոյ ուժ ունին
Բ. կարգի չորս տառերը	Բ. հայկական թագավորություն	երկու թուոյ ուժ ունին
Կ. կարգի չորս տառերը	Կ. հայկական թագավորություն	երեք թուոյ ուժ ունին
Դ. կարգի չորս տառերը	Դ. հայկական թագավորություն	չորս թուոյ ուժ ունին
Ե. կարգի չորս տառերը	Ե. հայկական թագավորություն	հինգ թուոյ ուժ ունին
Զ. կարգի չորս տառերը	Զ. հայկական թագավորություն	վեց թուոյ ուժ ունին
Է. կարգի չորս տառերը	Է. հայկական թագավորություն	եթևն թուոյ ուժ ունին
Ը. կարգի չորս տառերը	Ը. հայկական թագավորություն	ութևն թուոյ ուժ ունին
Թ. կարգի չորս տառերը	Թ. հայկական թագավորություն	ինն թուոյ ուժ ունին

Արդ այս երկրորդ դրութեամբ՝ առաջին
իմաստին մէջէն աւելցած չորս տառերը եթէ
հաշուեմք՝ գումարը 21 կ'ելլէ . ինչպէս ,

6 0 0 0
5 0 0 0 | 21

և պատկերին մէջի 24 տառերը ամենը մէկէն
ժողովելով եթէ հաշուեմք՝ գումարը 97 կ'ելլէ .
ինչպէս ,

7 7 0 | 87

Արդ վերի 21 թիւը նշմար է այնպէս ի-
մաստի մը՝ որոյ բառերը 21 տառերով բաղկա-
նան , և այն իմաստը յայտնող նոյն տառերը
եթէ համրանքի վոխեմք՝ պատկերին մէջի
գրուած տառերու գումարին համահաւասար
97 թիւ ելլէ . և ահա մեր խնդրածը կը զըտ-
նեմք երկրորդ իմաստին մէջը .

ԽՄԱՍՏ Բ.

0 1 9 6 6 0 8 1 6 2 8 4 7 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 0 | 21

Գումար 97

Գագիկ Շահնշահը՝ այս Քարուդաշտի եկե-
1 ցին շիներ է յանուն սրբոյն Գրիգորի , 'ի յի-
2 տակ այն մեծ յաղթութեանը , որ եղաւ իր
• ովք (յամի տեսառն 998) Ատրպատականի Մամ-

լուն բռնաւորին դէմ, ուր Հայք` և Վիրք՝ քսան
հաղար զօրքով՝ թշնամենին հարիւր հաղար զօր-
քէ բաղկացած տհեղ բանակին կաղթեցին,
«Օքնեա մւ Աստուած Քինչ մւ կանչելով» . և այս
յաղթութեան այս ազօթքին օժանդակութեամբ
ձեռք բերաւելուն կը վկայէ Պատմութիւնը :


«Եփոթեալ (ասէ) Հայոց և Վրաց յարշա-
ւանաց (թշնամոյն), առին իւրաքանչիւր ըգ-
ղէնս իւրեանց և 'ի բաց եղեալ զերկիւղ՝ աղա-
զակեցին տռ Աստուած և սփեն, «Օքնեա մւ Աստ-
ուած Քինչ մւ » . զայս ասացեալ՝ հեծան յերի-
վարս իւրեանց, և առանց ճակատ յօրինելոյ՝ 'ի
դիմի հարան թշնամեաց խառն 'ի խուռն . և
զայրագին յարձակմամբ կոտորեցին զնոսա 'ի
բերան որոյ և գիտացին, եթէ զօրու-
թեամբ Տեսուն յաջողեցաւ նոցա այն գործ,
վասնորոյ գոհանային զկատուծոյ, մանաւանդ զի
ոչ ոք 'ի նոցանէ անկաւ 'ի մարտի անդ, և ոչ իսկ
ոք վիրաւորեցաւ » : (Զամանակական Հայ. հաւ. Բ. եր. 880)

Հեղինակը՝ ծածկարանութեանս մէջ վերի
իմաստները պարունակելին յետոյ, Եկեղեցւոյն
շինութեան ժամանակին վերաբերեալ կարեւոր
պարագ այներն ալ առանց յիշատոկի չէ թողու-
ցեր . զոր օրինակ՝ Եկեղեցւոյն շինութեանը ժա-
մանակակից Հայրապետին անունը, Եկեղեցին
շինել տուող Թագաւորին հօրը և Թագուհւոյն
և զաւտկացը անունները, Եկեղեցին շինող ճար-
տարապետին անունը, այն ժամանակի մեր փա-
ռաւուր ու աշխարհաշէն իշխաններին և բաղմա-

վաստակ ու որբասէր վարդապէտներէն ոմանց
անունները, իւր անունը, ևս, ևս, և այս իմաստ-
ներն ալ թէպէտ տառերը համրանքին փոխելով
հաներ է, բայց ասոնց հոմար ալ ուրիշ եղանակ
բանեցուցեր է, ուստի աղէկ հասկընալու հա-
մար՝ ծածկարանութեան պատկերին մէջի ամեն
մէկ երեք տառերը մէկմէկ անդամ սեպելով
4. 2. և և մինչև 8 թուանշանով սրոշեցինք :

Արդ երբոր ասոնց մէջէն և թուանշանով
որոշուած բոլորակին մէջի (Ա Հ Հ), երեք տա-
ռերը եթէ առնեմք ու հաշուեմք, հնդետասան
թիւ կը զ տնեմք. և (ՍԱՐԳԻՎ) անունն ալ որ
այն ժամանակի կոտմաղիուին անունն է, թէ որ
հաշուեմք՝ ճիշդ հնդետասան թիւ կը գտնեմք :

ԽՄԱՍՏ Դ.



Եւ երբոր 5 թուանշանով որոշուած բոլո-
րակին մէջի (Դ Ա Ո) երեք տառերը առնեմք՝
որ այս ալ իր մէջը 15 թիւ կը պարունակէ,
Գաղիկ Շահնշահին գահակալութեան ժամա-
նակի՝ Հայոց թուականը կ'ելլէ, որ է Ն Լ Ը
(488), որոյ գումարն ալ 15 թիւ է :

ԽՄԱՍՏ Դ.



Այս երրորդ ու չորրորդ իմաստներուն
չշութիւնը՝ վարը պատմութեանց հատուած-
ներուն մէջ պիտի տեսնուի :

Երրորդ և չորրորդ իմաստներուն համար
պատկերին 1 և 5 թուռվ որոշուած երկու բո-
լորակները զատ զատ առ ինք . բայց հինգ ե-
րրորդ իմաստին համար՝ 3 և 7 թուռանշաներով
որոշուած բոլորակներուն մէջի (Գ.Բ.Բ Յ Ի Ի)
վեց տառերը մէկտեղ պիտի առնուին , որոց
դումարը 20 կ'ելէ . և այս չ0 թուռվ ալ՝ ե-
կեղեցւոյն հիմնարկութեան հանդէսին օրը
հանդիսադիր զանուող երեւելի վարդապե-
տաց անուններուն սկզբնատառերը կը զանեմք ,
որոց դումարն ալ 20 թիւ է :

ԽՄԱՍՏ Ե.

Գ Բ Բ Ց Ի Ի
Խ Զ Խ Խ Ձ Ձ | Ձ

Ա Ց Ց Ա Ց Ց Գ
Ձ Ձ Ձ Ձ Ձ Ձ | Ձ

- Ս. Պարդիս վարդապետ վայելաբան .
- Տ. Տիրան վարդապետ կամ Տիրանուն ի-
մաստասէր .
- Յ. Յենովք վարդապետ .
- Ա. Սամուէլ վարդապետ երաժիշտ .
- Յ. Յովէփ վարդապետ առաջնորդ Հնձուց
վանիցն .
- Յ. Յովհաննէս վարդապետ հողետես՝ մա-
կանուն կողեան .
- Գ. Գրիգոր վարդապետ Նարեկացի : (Տե՛ս
Հայուն Պատմ . Հայոց հաւ. Բ. եր. 823. 239 852. 906. 944):

Բայց այս իմաստը աւելի հաստատելու համար, կը վայէ դնել հսո Արքստակէս Լաստիվերտցիէն հատուած մը, որ ինքն ալ ժամանակաւ մօտ է ծածկարանութեան հեղինակին :

« Յաւուրս Ա. Գոդկայ Շահնշահի՝ ունէր զաթոռ Հայրապետութեան սէր Սարգիս, որ նեալ սրբութեամբ 'ի ծոց Եկեղեցւոյ, և վարժեալ կրօնաւորտկան ճգնութեամբ 'ի կրօնառանն՝ որ կոչի Սեւանայ կղզի. զոր շնորհիւն Առուելոյ կոչեն բստ տրմանաւ որութեան, և նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին. որ նորին կարգ օքն քաղաքավարեալ 'ի մարմնի, բարի հանդիսիւք՝ աւարտեաց զկեանս իւր : Եւ էին յայնմ ժամանակի վարդապետք՝ Սարգիս և Տիրան անուն և Յենովք՝ որ կաթողիկոսարանին էին վարդապետք, և Սամուէլ՝ որ կամ ջացն յացն ձորոց վանացն առաջնորդութեամբ հովուէր, և Յովսէփ՝ որ Հնձուցն էր նախագահ. (Լոռիվերտցին՝ հսո անժշտուկ իշտոք Սուետաննոս Առաջնիքն առանց, որ եւ վրէ շարուէն իսրհրդով ուսուր յիշեցի. ինչու որ ժամանական հեղինակ ինդն է, և իշեն համար սեպհանան ուղ ճը սանէ.) և Յովհաննէս 'ի նոյն գաւառէ ('ի Տարօնոյ), զոր վերադիր անուամբ իոզեռն կոչէին, որ զհաւատոյ զ իրան զրեաց, և Գրիգոր յոյժ իմաստունն բանիւք. և այլք բազումք, յորոց աւուրս բարձրանայր յոյժ զջիւր եկեղեցւոյ ողղափառ. խոսանվանուեամբ : : : : (Լոռիվերտցի. Պարմ. գլ. Բ:)

Բւշագիր բնթերցողաց յայտնի է որ առաջին, չուժովստիւնը սկզբնատառերով եղաւ, և երկրորդը ամեն առառերը համբանքի փոխելով, և երրորդէն մինչեւ հինգերորդը՝ միայն չորս բոլորակներուն մէջի առառերը համբանքի փոխելով եղաւ. ասկէ ետեւ ըլլալիքը՝ ամեն մէկ երեք առառը անխափիր թէ՛ բոլորակներէն ըլլայ և թէ՛ միջանկեալներէն՝ մէկ մէկանդամ ենթագրելով՝ համբանքի փոխելու է, և առաջին անգամին 37 թիւ առնելու է՝ ինչու որ 27 թիւ չելլար մէջէն. և հետզհետէ առանական թիւ աւելցընելու է, մինչեւ 97 թիւ երթալու համար. ուստի երրորդ 4. 5. 7. թուանշանով որոշուած (ԱՀՀ ԳՈՈ ՅԻՒ) ինն տառերթառնեմք ու հաշուեմք՝ 37 թիւ կը գտնեմք, և (Շահնշահ է.) այս իմաստն ալ 37 թիւ է.

ԽՄԱՍ 2.

Ա Հ Հ Գ Ո Ո Ց Ե Ե Ե Ե	Շ Ա Հ Ն Շ Ա Հ Ե
1 7 7 5 6 6 6 2 57	5 1 7 4 5 1 5 1 57

Գագիկ Ա. Բագրատունի թագաւորաց շարքին մէջը եօթներորդ է, և մականունն ալ Շահնշահ է. (Տես Պատմ. Հայ. հատ. Գ. յաւել. եր. 107:)

Տասը թիւ աւելցընելով՝ 47 թիւ պիտի գտնեմք. ուստի 4. 5. 7. 8. թուանշանով որոշուած (ԱՀՀ ԳՈՈ ՅԻՒ ՇՑՄ) տասն երկու տառերը

թէ որ առնեմք ու հաշուեմք, 47 թիւ կը
գտնեմք, և (Վաստի պարունակութ) այս իմաստն ալ
47 թիւ է:

ԻՄԱՍՏ Է.

Ա Հ Հ Գ Ո Ո Յ Ի Ի Շ Յ Մ
7 7 5 6 6 10 2 2 5 5 2 | 47

Վ Ա Ա Ա Կ Ա Պ Ա Ր Ա Պ Ի Տ
5 1 2 1 6 2 8 1 5 1 8 5 4 | 47

Վասակ սպարապետը՝ Գրիգոր Մագիստրոս
բազմահմուտ ու բարեպաշտ իշխանին հայրն է,
և վահրամ Պահլաւունիին մեծ եղբայրն է. ա-
սոնք երկուքն ալ Գագիկ Շահնշահին ժամանա-
կակից են. և իրենց քաջութեամբը և բարե-
պաշտութեամբը անմահ յիշատակաց արժանի՝
ազդին մեծ բարերարութիւններ ընելէն յետոյ
երկուքն ալ քրիստոնէական սուրբ կրօնին վրայ
արիւն թափելով՝ երջանիկ մահուամբ աշխար-
հէս ելեր են. ասոնց համար վ. Հ. Միքայէլ
Զամշեանը երկար գրելէն ետքը՝ բանը հոս կը
կնքէ. «Այսչափ ինչ բաւական համարեսցի
վասն երանելոյն վահրամայ նահատակի, որում
նմանատիպ գտաւ և փառաւորեալ հարազատն
նորին վասակ նահատակ, այն է հայր Գրիգորի
Դագիստրոսի»: (Պատմ. Հոյոց. հատ. Բ. եր. 943:)

Տառը թիւ աւելցնելով 57 թիւ պիտի
անեմք, ուստի՝ 2. 3. 4. 6. 7. թսւանշաննե-

բով որոշուած (ՍՅՑ ԳՐԻ ՈՒԹ ԲՈՅ ՅԻԻ) տասն
և հինգ տասերը եթէ առքիմք ու հաշուեմք՝
57 թիւը կը գտնեմք և (Պէհուար Պահլաւ) այս
իմաստն ալ 57 թիւ է :

ԽՄԱՍ Ը.

Ա Յ Յ Գ Ր Ր Ո Գ Թ Բ Ո Յ Յ Ե Ի Ի
Զ Կ Կ Խ Խ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ Յ | Ե

Պ Ե Հ Ր Ա Մ Պ Ա Հ Լ Ա Ի
Յ Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե Ե | Ե

Հսս պէտք է գիտնալ որ Պէհրամ անունը
պարթեւական անուն է, և մեր լեզուին մէջ
վահրամ կը հնչուի . բայց մեր հեղինակը՝ իւր
հաշիւը Պէհրամ Պահլամին յարմարցուցեր է :

Այս դիւցազունը՝ վասակ Պահլաւունի
Հայոց սպարապետին փոքր եղբայրն է, որ
ինքն ալ մեծ եղբօրը վախճանէն յետոյ Հայոց
սպարապետ եղաւ . սա էր որ Գաղիկ Շահնշա-
հին հրամանաւ՝ Ատրպատականի բռնաւորին
դէմ վեց հաղար Հայոց զօրքով այն ահեղ պա-
տերազմին մէջ դտնուեցաւ . և Շիրակայ գա-
ւառին մէջ դեռ կանգուն մնացած մարմարա-
շէն եկեղեցւոյն արձանագրութեանը մէջ իւր
մեծագործութիւնը յայտնի կը տեսնուի : (Տե՛ս
Պատմութեան Անույ. եր. 74.)

Տասը թիւ աւելցնելով 67 թիւ պիտի
գտնեմք, ուստի 2. 3. 4. 6. 7. 8. թուանշան-

Ներով որոշուած (ԱՅՅ ԳՐՈ ՈԴԹ ԲՈՅ ՅԻՒ ՇՅՄ) տասն և ութը տառերը եթէ առնեմք ու հաշուեմք՝ 67 թիւ կը գտնեմք . և (Կողբակո Յանես Աշո) այս իմաստն ալ 67 թիւ է :

ԻՄԱՍՏ թ.

Ա Յ Յ Գ Ր Ր Ո Գ Թ Բ Ո Յ Յ Ի Ի Շ Յ Մ
6 1 4 5 1 2 2 4 6 5 6 1 4 7 2 1 5 6 4 | 67

Կ Ա Տ Ր Ա Մ Ի Տ Յ Ո Վ Ա Ն Ե Ս Ա Շ Ո Տ
6 1 4 5 1 2 2 4 6 6 5 1 4 7 2 1 5 6 4 | 67

Պատմութիւնը կը վկայէ թէ « Սա (Գագիկ Շահնշահ) առեալ էր իւր կին զդուստրն վասակայ Սիսականի իշխանին Սիւնեաց զկատրամիտէ , յորմէ ծնան երկու որդիք . անուն անդրանկանն Յովհաննէս Սմբատ , և կրտսերոյն՝ Աշոտ » : (Չահ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 872:)

Տասը թիւ աւելցընելով՝ 77 թիւ պիտի գտնեմք , ուստի՝ 1. 2. 4. 5. 6. 8. թուանշաններով որոշուած (ԱՀՀ ԱՅՅ ՈԴԹ ԳՈՈ ԲՈՅ ՇՅՄ) տասն և ութն տառերը եթէ առնեմք ու հաշուեմք , 77 թիւը կը գտնեմք . և (ա. Գոհիկ Բագրատունի Աշոտեան) այս իմաստն ալ 77 թիւ է :

ԻՄԱՍՏ ժ.

Ա Հ Հ Ս Յ Յ Ո Գ Թ Գ Ո Ո Բ Ո Յ Շ Յ Մ
1 7 7 2 5 5 6 5 6 5 6 6 2 6 5 6 5 2 | 77

Գ Ա Գ Ի Կ Բ Ա Գ Ր Ա Տ Յ Ո Ի Ն Ա Շ Ո Տ Ե Ա Ն
1 5 2 6 2 4 5 2 1 4 6 7 4 1 2 5 6 4 5 4 | 77

Հոս՝ Գագիկ Շահնշահին անունը և քանիւ
երորդ բլլալը, և ցեղին անունը կրկնելուն
պատճառը՝ հօրը անունն ալ յիշելուն համար է:

Պատմութիւնը կը վկայէ թէ « Յայնմ ժա-
մանակի էր և Հայոց աշխարհին թագաւոր Գա-
գիկ որդի Աշոտոյ, եղբայր Սմբատայ և Գուր-
դենայ, 'ի ցեղէն Բագրատունոյ, այր հզօր և
յազթօղ 'ի պատերազմի. սա 'ի խազաղութեան
կալաւ զաշխարհս Հայոց: ի սորա ժամանակս
պայծառացան կարգք եկեղեցւոյ, և լուսա-
ւորեցան մանկունք ուխտի սրբութեան » :
(Լոռէնքոց: Պլ. Բ.)

« Գագիկ Բագրատունի՝ որ կարգեալ էր
իշխան իշխանաց, միջին որդի Աշոտոյ Ողոր-
մանի, և եղբայր Սմբատայ արքայի տիեզերա-
կալի, 'ի նմին աւուր յորում մեռաւ եղբայր իւր՝
թագաւորեց յԱնի 'ի վերայ Հայոց, և կոչեցաւ
Շահնշահ. (յամի Տեառն 989 և 'ի թուին Հայոց
Նէլ) » : (Զամ. Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 871:)

Տասը թիւ աւելցընելով՝ 87 թիւ պիտի
գտնեմք. ուստի 1. 2. 3. 4. 5. 6. 7. թուա-
նշաններով որոշուած՝ (ԱՀՀ Ս88 Գրը ՈԴԹ
ԴՈՈ ԲՈՑ ՅԻՒ) քսան և մէկ տառերը եթէ առ-
նեմք ու հաշուեմք՝ 87 թիւը կը դտնեմք. և
(Տըրու ճարտարապէտ յաւիքեաց) այս իմաստն ալ 87
թիւ է :

Ա Հ Հ Ս Յ Յ Դ Ե Ր Ռ Ո Գ Թ Գ Ո Ո Բ Ո Յ Յ Ե Ւ Ի
 1 7 7 2 4 0 2 0 1 0 2 0 2 0 2 0 2 2 | 37
 Տ Ր Դ Ա Տ Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Պ է Տ Յ Պ Ի Ր Ի Ն Ի Ա Յ
 4 2 4 1 4 1 2 4 1 2 4 1 2 4 1 7 1 2 4 1 2 4 | 38

Տրդատ ճարտարապետը՝ մեր Ազգային
 պատմութեանց մէջ մեծ համբաւ ունի , և գա-
 ղիկ Շահնշահին ալ ժամանակակից է . ուստի
 տարակոյս չկայ՝ որ այս եկեղեցւոյս ալ ճարտա-
 րապետը ինքն է . և այս արհեստին մէջ իւր
 յաջողակութեանը վրայօք մեր Ազգային պատ-
 միչները այսպէս կը գրեն .

* Բազում ջան եղեւ արհեստաւոր ճարտա-
 րացն Յունաց տու 'ի վերատին նորոդել (զՍուրբն
 Սովի) . այլ անդ (՚ի կոստանդնուպոլիս) դի-
 պեալ ճարտարապետին Հայոց Տրդատայ քա-
 րագործի՝ տայ զօրինակ շինուածոյն իմաստուն
 հանճարով , պատրաստեալ զկաղապարս կազ-
 մածոյն , և սկզբնաւորեալ զշինելն , որ և գե-
 ղեցկապէս շինեցաւ պայծառ քան զառաջինն : »
 (Ասո՞նչի . Գ. 27: Տե՛ս 'ի Հնակոս . Հատ . Գ. եր. 140:)

* Եղեւ շարժումն զարհուրելի յաշխարհին
 թրակացւոց և թիւթանացւոց , և կործանեցան
 քաղում քաղաքք . և 'ի կոստանդնուպոլիս ևս
 աւերեցան բազում եկեղեցիք , ընդ որս հեր-
 ձեալ պատառեցան և որմունք սրբոյն Սովիայ ,
 և մասն ինչ մեծի գմբեթի նորա , որով և վտան-
 գեցաւ եկեղեցին . զոր թէպէտ և բազմօք աշ-
 խատեցան ճարտարքն Յունաց 'ի նորոդել , բայց

ոչ կարտաց Անդ գիպաւ յայն աւուրսն Տըր-
դատ ձարտարապետ Հայոց , և իւրով հանձա-
րով եցոյց նոցա հնարս , որով կարացին նորո-
դել զայն վայելուչ էս , որպէս զրէ ականա-
տեսն Ասողնիկ : (Զահ Պատմ. Հայ. հատ. Բ. եր. 875:)

Տասը թիւ աւելցընելով՝ 97 թիւը պիտի
գտնեմք . ուստի պատկերին մէջի 24 տառերը
մէկանց առնելով հաշուելու է , ինչպէս որ
երկրորդ իմաստին համար ալ այս գործողու-
թիւնն ըրինք և 97 թիւը գտանք . և (Սու-
ժանաս գուրուղիու Ասողնիկ) այս իմաստն ալ 97
թիւ է :

ԽՄԱՍՏ ԺԲ.

Ա Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ս Ա Ս Ո Ղ Ն Ի Կ
2 4 6 8 1 4 4 6 2 5 1 5 4 1 8 5 4 1 2 6 8 4 2 6 8 4 2 6 8 7

Ծած կարանութեանս հեղինակը այս Ատե-
փաննոս Ասողնիկ վարդապետն է , որուն համար
պատմութեանց մէջ կը կարդամք .

« Եւ Ատեփաննոս Տարոնացին որ զաշխար-
հապատում գիրսն շարադրեաց սքանչելի յօ-
րինուածովք սկսեալ 'ի մարդն առաջին , և
գոյ բովանդակէ զպատմութիւն իւր 'ի վախ-
ճանն դադկայ , վասն որոյ պատմութիւնն է » :
(Լուսութերոց. գլ. Բ:)

« Ի սորա աւուրս ծաղկեցաւ Ատեփաննոս
վարդապետ Տարոնեցի՝ Ասողնիկ կամ Ասողնիկ

կոչեցեալ , որ և հրամանաւ . սորին Սարդով (կաթողիկոսի) արար զպատմութիւն Հայոց 'ի ծագմանէ ազգին մինչև 'ի ժամանակո իւր յերիս գիրս , ցամ Տեառն 1000 կամ 1004 . Սորա երեւի արարեալ և զՄեկնութիւն մարդարէութեանն Երեմիայ . զի Գրիգոր Մագիստրոս՝ որ փոքր մի յետոյ էր , և 'ի պատանեկութեան տեսեալ էր զնա , գրէ 'ի թուղթն առ Գէորգ վարդապետ այսպիսի ինչ . « Վասն որոյ բանս հայոց 'ի քէն զՄեկնութիւն Երեմիայի մարդարէի , զոր գրեալ է Ասողնկայ Երշանիկ ծայրագոյն հծերոյ , շնորհել մեզ » : (Զահ . Պատմ . Հայոց . հատ . Բ . եր . 877:)

Ասողնիկ բառը մականուն է , բայց հաշուելով՝ 30 թիւ կը գտնեմք . և Պատմող բառն ալ նոյնպէս հաշուելով՝ 30 թիւ է . ուստի երբ որ բսեմք թէ հանճարեղ հեղինակը՝ այս մականունը իրեն համար ինքը հնարեր է , շատ հաւանական է , ինչու որ երեւելի գործը իւր շինած Ազգային պատմութիւնն է :

ԻՄԱՍՏ Ճ.Գ.

Պ Ա Տ Մ Ո Ղ
Ո Ւ Գ Յ Յ Ո Ղ

Ա Ս Ո Ղ Ն Ի Կ
Ա Շ Ո Գ Վ Ա Ֆ Ո Ղ

Կարծեմ մէկուն մտքէն պիտի չանցնի՝
թէ ութն ու կէս գար յառաջ այս ծածկա-
բանութիւնը անխորհուրդ շինուած ու գըլ-

ուած ըլլայ . վասն զի մինչեւ որ բանը իր մէջէն իմաստ տալու համար դրսէն խորհող միտք մը չունենայ , անկարելի է անկէ իմաստ հանելը . օրինակի համար՝ գրաշարի սեղանէն դիպուածով՝ 24 տառ կրնամք տռնել և ցրիւ շարել , բայց մէջէն իմաստ հանելն անհնարին է . ուստի կ'երեւի որ տրուած բացատրութիւններուն վրայ տարակոյս չի մնար , որովհետեւ այն ժամանակի պատմութիւններուն հետ ալ բաղդատելով՝ շատ համաձայն գտնուեցան : Բայց արդարեւ այս կերպ գրուածքէն հասարակութեան մեծ մասը չկրնար իրեն շահ մը քաղել , սակայն հասարակաց մէջէն ալ անհնար է որ բանասէր ու հետաքրքիր մարդիկ պակաս ըլլան . 'ի հարկէ լրագիրը կարդացին , ու իրենց մտքին զարկաւ այս ծածկաբանութեան ձեւը . մեք զ՞յն բացատրելով՝ անսոնց հետաքրքրութիւնը յագեցընել ուղեցինք՝ թէ որ հաճելի կը համարին . բայց թէ որ զուր աշխատութիւն մը սեպեն՝ մեք դարձեալ մեզի համար շահ ունիմք . վասն զի քանի մը երեւելի հեղինակներու պատմագրութիւնը նորէն աչքէ անցընելով , ազգային անցքերը՝ և անսոնցմէ յառաջ եկած տխուր յիշատակները լաւ ևս տպաւորեցան մեր սրտին մէջ , և հառաչել տուին մեզի . ու թէ որ չեմ սխալիր՝ այս հառաշանաց արձագանքը մինչեւ Շիրակայ դաշտը հասան . . . ո՞հ , ո՞րչափ քաղցր ու ախորժելի է հայրենեաց յիշատակութիւնը . . . :

ԶՈՐ Ի ԶՔՆԱՂՆ ԱՆԻ ՀՆԱՐԵԱՅ Ա.Ս ՈՂ ԶԻԿ
ԶԱՅՆ ՅԱՆՇՈՒՔՆ ԱՆԻ ՈՂԲԱՅ ՆԻ ԿՈՂ Ա.Ս

Ոտանաւորիս առաջին տողը բաղկացընող
հինգ բառին սկզբնատառերը եթէ հաշուեմք՝
17 թիւ կը գանեմք. և Քարուդաշտի եկեղեց-
ւոյն շինութեան ժամանակի Հայոց թուականը
որ է նիսթ, այս երեք թուանչան տառերն ալ
եթէ գումարեմք՝ ճիշդ 17 թիւ կը գտնեմք.
ինչպէս,

Զ Ի Ա Հ Ա	Դ, Ե Թ Թ
6 2 1 7 1	4 4 9
<u>17</u>	<u>17</u>

Երկրորդ տողը բաղկացընող հինգ բառին
սկզբնատառերը եթէ հաշուեմք՝ 20 թիւ կը
գտնեմք. և մեր այս տարուան Հայոց թուա-
կանը՝ որ է Ո.Մ.Ղ.Ը, այս չորս թուանչան տա-
ռերն ալ եթէ գումարեմք՝ ճիշդ 20 թիւ կը
գտնեմք. ինչպէս,

Զ Զ Ա Ա Ն	Ո Մ Ղ Բ
6 5 1 6 4	1 2 9 8
<u>20</u>	<u>20</u>

Ոտանաւորին առաջին տողը 27 տառերէ
բաղկացեալ է, և այս 27 տառերը թէ որ հաշ-
ուեմք՝ 119 թիւ կ'ելլէ. Երկրորդ տողն ալ ճիշդ
27 տառերէ կը բաղկանայ ու 119 թիւ կու տայ:

Ա.Ս ՈՂ ՆԻԼ	ՆԻԼ ՈՂ Ա.Ս
ա ը դ	դ ը ա

Բացատրութեանս հեղինակը՝ վենետիկու Մխիթարեան ու իտէն վ. Հ. Ղեւոնդ Մարգարեան (Ալիշան) վարդապետին ուղղեց նամակաւ մը իւր այս աշխատութիւնը, որպէս զի թէ որ արժան դատեն՝ հրատարակեն : Յիշեալ վ. վարդապետը՝ բացատրութեանս հեղինակին յետագայ նամակը գրելով, Բաղմանէպ տետրակներուն 1850 Յունուար 1 թուովը այս Անիի ծածկագիր յիշատակարանին բացատրութիւնը հրատարակեց :

Ազնիւ Տեառն բանասիրի և ազգասիրի Նիկողայ խնդալ .

27 Նոյեմբեր 1849. Վենետիկ.

Զգիր մեծամեծար սիրոյդ և զրանասիրական՝ մասաւանդ զազգասէր ախորժակացդ՝ ընկալայ 'ի ձեռն իմոյս արգոյ հոգեկցորդ եղօր հօր Աքրահամու վարդապետի . և յաւէտ ուրախ եղէ դտեալ յեղակարծուց նոր զոմն փութաճան ազգասէր, որ և այնքան վառեալ յոգի հայրենականացն շնորհաց և աւանդից, մինչ և զմերս փանաքութիւն՝ որ 'ի նոյն կրթի խոկ և սէր, զուգականել կամ մերձեցուցանել վեհից անձանց և իւրոցն սրտի ըղթալեաց : Շնորհեմք սիրոյդ գսիրոյդ համարձակութիւն, և մեք գիտակ մերումաշափու՝ զքոյդ առաւել իմանափ սովին զավնուութիւն իմացուածոց :

Ոչ փոքր հաճութիւն և զարմանս յաւել 'ի մեզ և գիւտ դժուարալցծ և անյօղ աճայն տառիցն, հեշտացր սլուուղ քրտնավաստակ մասիսոնութեան երկայնամիտ սգւոյդ և հանճարիմաց մտաց . որ զի կամ ստոյդ և

աներկբայ լուծումն է մտաց արձանագրողին , և այս
Քեզ պսակ , և կամ անդր քան զորձանագրողին կար-
ծիս և զբնաւից ակնկալութիւն ճարտարագիւտ հնարք
յանկուցիչ մտաց , և այս փառք առաւելահրաշք . որով
Ճայնն ծածկեալ 'ի հարուստ լուռթեան դարուց ար-
տահնչէ այս առաջին 'ի վսեմունակն Անի , կամ ար-
ձագանք ճշգրտատիպք բացագանչեն 'ի վիճ վեհաշուք
Սաղկանց ձորոյն , և միօրինակ հրճուին տիրագնաց
գետոյն Ախուրեան՝ բազմայիշատակ ալիք : Արդ զայն-
քանոյ երկասիրութեանդ ընծայումն ընկալեալ յօ-
ժար սրտիւ՝ օժանդակեմք 'ի լցոս , 'ի սկիզբն մերձե-
ցելցյս նորոյ տարւոյ , 'ի զբօսանս և 'ի խրախոյս մեր-
ազնեայ բանասիրաց , որպէս և խնդիր Ավնուութեանդ
պահանջէ : Բերկրեալ ընդ բերմունս հայրենասէր սըր-
տիդ , համակիր սրտիւ մատուցանեմ Քեզ և քոյոցդ
սիրելեաց՝ 'ի պտղց տէրունականս պաշտաման զօրհ-
նախառն մաղթանս 'ի յամայր բարեկենդանութիւն :

Ազնիւ տէրութեանդ

Խ. Ծ. Եւ ազօքարար

Տաճանեալ Հ. Ղեռնդ Հարտաղեալ Մ. Ալշան.



4

Կարսի Առաջնորդ շնորհաշուք կարապետ
վարդապետին (չորրորդ տարի) 175 թիւ Հայ-
աստան լրագրոյ միջոցաւ հրատարակել տուած-
արձանագրութիւններուն մէջ երկու ծածկագիր
յիշատակարան ալ գտնուեցաւ . առաջինը որ
Շիրակայ գաւառին աւերակներէն մէկուն մէջ է,
վիրաբոյժ սպեղանի մը ձեռք բերելու ճարտար
նուսխան է , բայց մեծ աշխատութիւն կ'ուզէ և
աշխատողներուն ալ շատ սուզի կը նստի . անոր
համար բացատրութեանս հեղինակը այն կտորը
լուութեամբ պատուեց , ու երկրորդը որ Հոռո-
մոսի վանքին մէջն է՝ բացատրեց , և հետեւեալ
նամակաւ Հայաստան լրագրոյն ուղղեց , որ 1851
Յունուար 5 թուով հրատարակուեցաւ :

ԱՐԴԻՍ ՀՐԱՏԱՐԱԿԻՑ .

Որովհետեւ բռնադատեցիք մեր տկարութիւնը՝
այս երկրորդ ծածկաբանութիւնն ալ բացատրելու
ահա ես ալ ձեր կամեցողութիւնը հարկ մը սեպելով
իմ վրաս , համարձակեցայ որչափ որ միտքս զօրեցին՝
զանի բացատրելու , համեմատութեամբ ազգային
պատմութեան . ուստի կ'աղաչեմ որ այս մեր բանա-
սիրական աշխատութիւնը իբրեւ փունջ մը ծաղկան
ընդունէք , և լրագրոյդ միջոցաւ հրատարակէք . որն
որ հայրենասիրական եռանդեամբ մը կ'ընծայեմ ազ-
գիս խելամուտ և հետաքրքիր ընթերցողներուն , վրա-

տահանալով առ Հյ ներոգամտութեանը , որ թէ գըտ-
նուած խմասաներուն հաւնեցան՝ ի հարկէ նախնեաց
խմաստութեանը վրայ արտի զարմանան . բայց թէ որ
անյարմար բան մը սեպեն՝ կրնան գուշակել որ Հայ-
աստանի մը պարտէ զին մէջ՝ ըստ որում պարտէզ , ան-
հրաժար ծաղիկ մ' ալ գտնուիլը՝ պարտէզին արհամար-
հութիւն . մը չէ . բայց և այսպէս՝ Անւոյ աւերակներուն
մէջ նախնեաց յիշատակները վնատուող քրտնաշխատ
շնորհափայլ կարագեա վարդապետին հայրենասիրու-
թեանը մենք ալ կցորդած համարուինք նէ , աշխա-
տութիւննիս վարձատրուած կ'ըլլայ :

18 Հոկտ. 1850.

՚ի կ. Պօլիս.

Մնամ յարգութեանդ

զերմեռանդ բարեմաղբու-

զւրուկը նէիոշո Հովոեան



ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԾԱԾԿԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ
ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԻՑ

Հայաստան լրագրոյն չորրորդ տարուան
175 թուով հրատարակուած Հոռոմոսի վանքին
ստորագրութեանը մէջ՝ հինգերորդ եկեղեց-
ւոյն արեւմտեան լուսամտի մը գրսի վերի կողմը
կարդ մը անյօդաձայն տառեր կան շարուած
այս ձեւովս .

+ ԻՌՈԶՃՂՋՄ : ՄԿՂԸ : և 'ի ՆՉԱ : ԹԱ : Հ :

Ասոր ետեւէն ալ արձանագրութիւն մը կը
հետեւի այսպէս .

« Էս Սմբատ որդի Գագկայ
Ետու զիմ գեղս զՄահօտունիս 'ի մեր հանդըս-
տարանս թագաւորաց 'ի տիեզերահոչակ վանսն
Հոռոմոսի վասն մեր մեղաց թողութեան . և
գրեցի 'ի սուրբ Գէորգ յամենայն տարի Դ. քա-
ռասունք Գագկայ : Եւ 'ի վախճանելո՞ թ. ինձ,
և թ. Գագկայ մինչ 'ի գալուստ տեառն» եւ, եւ:

Եւ այս արձանագրութեան վերջացած
տեղը՝ մանր գրով գրուած ստորագրութեան
պէս բան մ'ալ կայ ասանկ .

+ ԹՈՎՄԱՒԵԴ

Արդ մեր նախնեաց արդիւնքը՝ մանաւանդ
մեջաւն հեղինակին վաստակը՝ միայն ժամա-
նակի մաշող ժանիքներէն ազատելու մոռք՝
այս ծ.սծ զարանութիւնն ալ քանի մը յօդուածի
բաժնելով բացատրել ջանացի :

Ա. Տառերուն շարքէն վերջակէտով զատ-
ուած թւթն տառերը՝ միաւորի ուժով 35 թիւ
կ'արտադրեն . ԱՆԴԱՐՁԱԿԱՆ բառն ալ նոյն-
պէս 35 թիւ է :

Ե Ռ Ո Զ Ճ Ղ Ը Ը Մ Ա Ն Դ Ռ Ո Զ Ա Կ Ա Ն
2 1 6 6 1 8 8 2 | 55 1 4 4 1 5 8 1 6 1 4 | 55

«Անդարձական» բառը «կտակ» ըսել է . ար-
ձանագրութիւնն ալ յայտնի կ'իմացընէ՝ որ Գ.
Սմբատ Յովհաննէս թագաւորը իւր Սահառունի
դեղը Հոռոմոսի վանքին նուիրեր է կտակաւ .
ուստի այս ութն տառերը հոս արձանագրու-
թեան վերտառութեանը առաջին մասն են :

Բ. Հետեւեալ չորս տառերը (ՄԿՂԸ) նոյն-
պէս վերջակէտով զատուած՝ միաւորի ուժով
25 թիւ կ'արտադրեն . ու թէ որ 25 թուոյն
հորիզոնական դիրքը փոխեմք և ուղղահայեաց
դիրքի վերածելով դումարեմք , 7 թիւ կը
դտնեմք :

Մ Կ Ղ Ը
2 6 9 8 | 55 | 2 5 | 7

Եւ ՍՄԲԱՏ ԹԱԳԱՒԻՈՐ՝ այս երկու բառերով
ալ նոյն գործողութեամբ՝ 7 թիւ կը դտնեմք ,

ՍՄԲՈՅՏԻՈՒԹ
ՇՐՋԱՎԱՐԱԿԱՆ

Որ կտակադրին անունն է, ինչպէս որ սրձանագրութիւնը յայտնի կ'իմացընէ. ու (ՄԿՂԸ), այս չորս տառերն ալ՝ հոս վերտառութեան երկրորդ մասն են :

Բայց գիտնալու է որ՝ համբանքի մը հորիշնեական դիրքը ուղղահայեացի փոխելով՝ մէջէն պահուած իմաստ հանելը այն ժամանակը կ'ըլրայ, երբոր նոյն իմաստը յայտնի խօսքով ալ անմիջապէս դրուած րլաց. ինչպէս այս արձանագրութեան մէջ ալ Սմբատայ անունը յայտնի դրուած է :

Գ. Ալերտառութեան վերջին մասին համար կը մնան սա հետեւեալ տառերը. « և 'ի նշԱ: թԱ: Հ: . ասոնք նկատողը անշուշտ սա հետեւեալ բանը կը կարգաց. « և 'ի 481 թուականին Հայոց », բայց այսշափը բաւական սեպելով ձգել անցնելու չէ, ասոր մէջ ալ պահուած իմաստ վնտառելու է. ուստի՝ ծածկաբանօրէն ալ ըսել է, « ՅԱՄԻ (ի նախդրին զօրութեամբը) ԵՐԵՔԾԱՍԱՆԵՐՈՒԴԻ (նշԱ) այս երեք տառերուն միաւորի ուժովը ($ն=4+2=8+Ա=1=13$), ԹԱԳԱՀՈՐԵԼՈՅՆ ՀԱՅՈՑ (ՅթԱ: Հ: այս երեք տառերուն ալ համառօտապդրութեան զօրութեամբը): Ասոր իւր մէջէն ապացոյց՝ թ տաին քովը անմիջապէս Ա մը աւելցընելն է. նշու որ՝ համառօտապդրելու համար « Հայոց »

ըսելու տեղ՝ չ դնողը, կընար և թուականին ։
աեղն ալ թ մը գնելավ անցնիլ, բայց ասանկ չէ
ըրեր՝ Ա. մ’ ալ աւելցուցեր է, ընթերցողին միտքը
արթնցընելու համար՝ պարզաբար [իմացուածէն
՚ի զատ պահուած իմաստ մ’ ալ որոնելու. և դրսէն վկայ՝ մեր ազգային պատմութիւնն է, վասն
զի Հայոց 481 թուականին՝ որ այս վերջի մասին
մէջ յայտնի դրուած է, Ամբատայ իշխանու-
թեան երեքտառաներորդ տարին կը պատտա-
խանէ : (Տէ՛ս Պատմ. Հայ. ’ի վերջ գ. հատ. Դ-Ռ-է-
իշխան. ’ի Յաւել. եր. 77:)

Արդ այս անյօդաձայն տառերուն շարքը՝
ներքեւի արձանագրութեանը վերտառութիւնն
է, որուն մէջէն հետեւեալ իմաստը կ’ելլէ ։
և Անդարձական Ամբատայ թագաւորի, յամի
երեքտառաներորդի թագաւորիելոյն Հայոց ։

Դ. Երկրորդ յօդուածին մէջ (Մելլը) առ-
ոերը՝ որ կտակադրին տեռւնը ցըցուցին, հիմա
ալ կտակին թէութիւնները պիտի ցուցընեն։
կտակին թէութիւնները՝ արձանագրութեան
մտքին նայելով պարզաբար տարին չըրս քա-
ռասունք է. այսինքն 366 օրուան մէջ՝ 160 օր
հօրը Ա. Գագիկ Շահնշահին՝ ու իրեն համար
աշօթք ընել կը պատուիլէ. բայց տարիին բո-
լցրական թիւէն՝ որ է 366 օր, սա աէքսւնա-
կան օրերը կ’ուզէ որ դուրս մնան. Մննդեան
առաջին օրը ։ Զատիկի առաջին ու երրորդ
օրերը 3.՝ Համբարձման օրը ։ Հոգեգտալաւան
օրը 5.՝ Այլակերպութեան առաջին օրը 6. Վե-

բավորխման առաջին օրը 7. Վերացման խաչի
առաջին օրը 8. Արդ՝ 366 էն 8 ելէ նէ՝ 358
կը մնայ, և (ՄԿՂԸ) տառերն ալ սովորական
հաշուով՝ 358 թիւ կ'արտագրեն :

200	80	90	8	58
-----	----	----	---	----

Հոս մտագրութեան արժանի բան մ' ալ
կայ. Իէ որ միտքը միայն 358 թիւ ցուցընել
բլլար՝ կրնար ուրիշ աւելի պարզ կերպով մը
ցուցընել. ինչպէս (ՅԸԸ) այս երեք տառերն
ալ ճիշդ 358 թիւ կ'արտագրեն սովորաբար,
և միաւորի ուժով ալ 46, որուն հորիզոնական
գիրքը իէ որ փոխուի՝ գարձնալ 7 թիւ կ'ար-
տագրէ, ու երկրորդ յօդուածով եղած գոր-
ծողութեան վեաս մը չի տար .

8	8	6	10	10	10
---	---	---	----	----	----

Բայց քառասունքը չորս ըլլալուն համար 358
թիւը՝ (ՄԿՂԸ) այս չորս տառերով չափեր է .
այնպէս որ տալիքին սկիզբէն տանելով՝ (Մ) այս-
ինքն 200 օրուան մէջ առաջին քառասունքը
պիտի վճարուի . (Կ) այսինքն 60 օրուան մէջ
եռկրորդ՝ քառասունքը պիտի վճարուի . (Ղ)
յսինքն 90 օրուան մէջ երրորդ քառասունքը
իտի վճարուի . (Ը) այսինքն 8 օրուան մէջ
լրորդ քառասունքը պիտի վճարուի :

Ե. Թէ որ շաբաւած պառերը բաց 'ի մի-
ջանկեալ (և) շաղկապէն ու ('ի) նախդիրէն՝ մեր
տառերուն սովորական թուանշանիուժովը եթէ
հաշուեմք՝ գումարը կ'ըլլոյ: 2853, որ աշխարհի
արարչութենէն առնելով՝ մեր ազգին՝ առաջին
նախահաւառւն՝ Հայկ նահապետին տիրապետու-
թեան թուականն է ըստ իօմանասնից: (Տե՛ս
Պատմ. Հայ. 'ի վերջ գ. հատ. Դաստիարէ. էլլ. եր. 25.)

Զ. Մեր Բագրատունի իշխանները՝ իրենց
ծագումը հրէից ազգէն ըլլալը քաջ գիտէին .
ուստի հեղինակը՝ Սմբատայ բուն նախահաւ
Աբրահամ նահապետին կոչման՝ ու Եղիպտոս
իջնալուն թուականին շատ մօտ թուական մ’
ալ հաներ է : Ըստ ժամանակադրաց կոչումն
Աբրահամու՝ նախ քան զՔրիստոս 1917 տարիէ .
(Տե՛ս Պատմ. Հայ. ի վերջ Գ. հատ. Դաստիակ. էլեմն. եր. 24.)
արդ՝ առջի և տառը նախդիր ու հետեւեալ
եօթն տառերը որ վերջակէտով զատուածէն ,
դարձեալ սովորական Խուանշանի ուժով հաշ-
ուելով՝ գումարը 1914 է . և ինչպէս ըսինք՝
ասիկայ վերի թուականէն քանի մը տարի միայն
տարբերութիւն կ’ունենայ :

1914

Է. Դարձեալ առջի ի տառը նախդիր, և
միայն Ռ. տառը սովորական հաշուով առնելու
է՝ որ է 1000, և մնացեալ վեց տառերը միա-
ւորի ուժով բանեցընելով՝ գումարը կ'ըլլայ
1032, որ Սմբատայ կտակ ըրած ժամանակին
Փրկչի թուականն է :

$$\begin{array}{r} \text{Ռ. Ո. Զ. Ֆ. Դ. Պ. Ը. Մ.} \\ \text{6} \quad 6 \quad 4 \quad 9 \quad 8 \quad 2 \\ \hline 1000 \end{array}$$

Ասոր ճշգութիւնը ինքնին յայտնի է . ո-
րովհետեւ տառերուն շարքին մէջ արդէն
Հայոց թուականը կայ, որ է ՆԶԱ (481) .
ասոր վրայ աւելցուր Փրկչի թուականին ու
Հայոց թուականին մէջտեղ եղած տարբե-
րութիւնը՝ որ է 551, գումարը կ'ըլլայ 1032 .

$$\begin{array}{r} 481 \\ 551 \\ \hline 1032 \end{array}$$

Ը. Վերի եօթներորդ յօդուածին մէջ ի
նախդիրը գուրս ձգեցինք ու միայն Ռ. տառը
սովորական կերպով հաշուեցինք . այժմ՝ այս
ուժերորդ յօդուածիս մէջ՝ երկուքն ալ գուրս
ձգելու ու մնացած վեց տառերն ալ սովորական
կերպով հաշուելու է, գումարը կ'ըլլայ 914 .

$$\begin{array}{r} \text{Ռ. Ո. Զ. Ֆ. Դ. Պ. Ը. Մ.} \\ \text{6} \quad 6 \quad 4 \quad 9 \quad 8 \quad 2 \\ \hline 800 \end{array}$$

$$\begin{array}{r} 90 \\ 10 \\ \hline 914 \end{array}$$

Այս գումարէն՝ այս ժամանակի Հայոց թուականը՝ որ է 481 հանելու է, ինչու որ տառերուն շարքին մէջ այս թուականը յայտնի ալ գրուած է. կը մնայ՝ 433. այս ալ Հագարացւոց առաջին Ամիրապետին և օրէնսդրին երեւնալուն թուականն է, որ իրենց հասարակ թուականէն՝ այսինքն հիճրէթէն տասը տարի աւելի է : Պատմութիւնը կ'ըսէ որ (յամի Տեառն 622) « իբր տասն ամօք յառաջ երեւեալ էր յանապատին Ամրաբիայ՝ 'ի ֆառառէսին զարմէ՝ առաջին Ամիրապետ Հագարացւոց և մա : (Պատմ Հայ. հատ. Բ. եր. 340.) »

Արդ հիճրէթի առաջներորդ տարին՝ որ Փրկչի 622 թուականէն կ'ուկսի, պատմութեան այս խօսքին նոյելով 622 թուականը՝ ամիրապետին երեւմանը մետասաներորդ տարին, և ակրապետութեանը առաջներորդ տարին կ'ըլլայ, և հետեւաբար ալ 1032 Փրկչի թուականին և 481 Հայոց թուականին նիշտ կը պատասխանէ 433 թիւը . և որովհետեւ մեր Բագրատունի իշխանները միշտ հարկատու էին Հագարացւոց ամիրապետներուն, հաւանական է որ Հագարացւոց հետ ունեցած գործառնութեանցը մէջ անոնց թուականը կը գործածէին. ծածկաբանութեանս հանճարեղ հեղինակին միտքն ալ՝ զանազան թուականները իրարու յարմարցընել ըլլալով՝ վարպետութեամբ մը այս թուականն ալ ցըցուցեր է :

Թ. Արձանագրութեան վերջացած տեղը՝
ստորադրութեան ձեւով ու մանր զրով գըր-
ուած Յովհանէտ ձայնը յատուկ անուն է և ոչ ալ
նշանական բառ է . այլ նախ՝ Փրկչի 1032 թուա-
կոնին կրկնութիւնն է , համրանքին հորիզո-
նական գիրքը՝ ուղղահայեաց գիրքի վերածեց
լու եղանակաւ , որ այս եղանակը՝ առաջուց
յացտնի գրուած բաներու համար ՚ի գործ
կածուի ըսեր եմք . Արդ ինչպէս որ եօթնե-
րարդ յօդուածին մէջ՝ տառերուն շարքէն ա-
ռաջին ի նախդիրը գուրս ձգելով ու միայն Բ
տառը հազարաւոր՝ և մնացեալ վեց տառերը
միաւորի ուժով առինք , ու Փրկչի 1032 թուա-
կանը գտանք , այժմ հոս՝ Ռ տառն ալ միա-
ւորի ուժով պիտի առնեմք , որով 7 տառե-
րուն գումարը կ'ըլլայ 33 .

Ո Ո Զ Ժ Ղ Ը Մ
- Չ Ֆ Ֆ - Չ Հ Շ | Տ

Ասոր հորիզոնական գիրքը ուղղահայեաց
գիրքի վերածելով թէ որ գումարեմք՝ արտա-
քլեալը կ'ըլլայ 6 . ինչպէս ,

33
8
3
6

Փրկչի 1032 թուականն ալ այս եղանակաւ
ինչպէս որ 6 թիւ կ'աբտադրէ ,

1
9
5
2
<hr/>
6

Նմակառագէս նույնատե ձայնն ալ այս եղանակաւ 6 թիւ կ'արտադրէ .

Թ Ա Վ Մ Ա Խ Ի Գ
Չ Ֆ Ե Շ - Ռ Զ Կ | Խ | Խ | Չ

Իւ այս անհշան ձայնին՝ նախ Փրկչի թուականին կրկնութիւնն ըլլալուն ապացոյցը իւր մէջն է . առաջին տառը որ է թ , եօթներորդ տառը որ է ի ու վեցերորդ տառը որ է ի՞ թ է որ զատեմք , այս 3 տառ երով գմիւր բառը կը բաղկանայ , որ թուականին արմանն է . ու մնացեալ ուա տառերը ովհեք՝ միաւորի ուժով դարձեալ նոյն թուականին ուժը չի կ'արուցնալ նելով՝ 15 թիւ կ'արտադրեն .

Թ Վ Մ Ա Գ
Չ Ֆ Ե Շ - Ռ Զ Կ | Չ

* Ասոր ալ հորիղոնական գիրքը ուղղահայեացի փոխելով եթէ գումարեմք՝ տակաւին 6 թիւը ամբողջ կը պահէ՝ Փրկչի թուականէն արտադրեալ 6 թուոյն հաւասար .

15
<hr/>
4
5
<hr/>
15

Ժ Բայց այս օքնակ հինգ տառերը ուրիշ պաշտօն մ'ալ ունին, որով ծածկաբանութեան մեծահամբաւ հեղինակին անունը երեւան կ'ել-լէ. ուստի խորհրդով ալ ստորագրութեան ձեռով դրեր է. արդ՝ այս հինգ տառերը հետեւեալ ստորագրութեան սկզբնատառելին են.

ՈՐԻՔ ՎԱ--ԼԻ ՄԵՃ ԱՆ ԳԵՒՇԵ

Ասոր հաստատ ապացոյց՝ ստորագրութիւնը բաղկացնող տառերուն թուոյն ուղղահայեաց գիրքէն, ու նոյն տառերէն՝ միաւորի ուժով արտադրեալ թուոյն ուղղահայեաց գիրքէն, և օքնակ՝ այս հինգ տառերուն ուղղահայեաց գիրքէն արտագրեալ 6 թուոյն հաւասարութիւնն է. արդ՝ ստորագրութիւնը 24 տառերէ բաղկացեալ է, որուն ուղղահայեացը կ'ընէ 6.

$$\frac{2}{4} \\ \frac{4}{6}$$

Ստորագրութիւնը բաղկացընող տառերը՝ միաւորի ուժով 78 թիւ կ'արտադրեն. ինչպէս,

Ո Ր Դ Ի Վ Ա Ս Ա Կ Ա Յ Ս Ե Մ Ի Ա Ռ Ն Գ Ր Ի Գ Ո Ր
Յ Ֆ Հ Գ Յ Ֆ Ա Յ Ֆ Ի Խ Ձ Ա Յ Ա Գ Ա Գ Խ Ձ Ե Յ Յ 78

Եւ այս 78 թուոյն հորիզոնական գիրքը կրկին անդամ ուղղահայեացի վերածելով կը դումարեմք, ու ճիշդ փնտռած 6 թիւերնիս կը դանեմք.

$$\begin{array}{r} 78 \\ - 7 \\ \hline 8 \\ \xrightarrow{-} \\ \hline 18 \\ - 1 \\ \hline 8 \\ - 6 \\ \hline 2 \end{array}$$

Եւ ծածկաբանութեանս հեղինակն ալ նոյն ինքն մեծն գրիգոր Մագիստրոս՝ բազմարդիւն և կրօնասէր իշխանը ըլլալուն վրայ տարակոյս չի մնար . որովհետեւ ինքը Յովհաննէս Սմբատ երրորդին ժամանակակից ու սիրելին էր : Արիստակէս լաստիվերտցին կ'ըսէ՝ այս փառաւոր իշխանին համար . «Այր իմաստուն էր և խելամուտ յոյժ Աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք» . (Եր. 41.) ու հեղինակին գրած մէկ նամակէն կ'իմացուի համարողական արուեստին մէջ որչափ հմտութիւն ունենալը . որն որ Պետրոս Դետարգել կաթուղիկոսին դրելով՝ անձկանօք կը խնդրէ հայրապետէն՝ Անանիա Շիրակացիին համարողական արուեստին գիրքը, որուն խանգարուածը հիմա Վեցհազարեակ անունով՝ ստախօս կախարդներու ձեռքը ու նախապաշարեալ ուամիկներու բերանը ժուռ կու գայ : « Եւ զի (ասէ) բաղում աշխատութեամբ խոնջեալ և տագնապեալ մինչ տակաւին յիմումն անտիական ելով տիս, հազիւ հաղ մակացու այսմ եղեալ՝ ըստ որում են յարաբացւոց և քաղդէացւոց և յունաց, ոչ դանդաղեցայց քննութեամբ

զինորձ առնուլ . և խնդրեմք՝ ՚ի առաջիկ լուսա-
փայլութենէգ զնորագոյնն մատեան չորհել
մեզ՝ (զգիրս Անանիսյ Շիրակայնոյ, որ բազում
աշխատութեամբ և յածալու խրնջմամբ հաւա-
քեալ ՚ի զանազան յոգնաբեղուն մատենից) . զի
այժմ մերձ՝ ՚ի ծերութիւն հասեալ եմք, և գիւ-
րին վերծանեալ հասցուք ըստ կարողութեան,
զի մի՛ յերկոցունց կողմանցն ունիցիմք մարտակ-
ցութիւնս՝ տեսութեան և մտածութեան, քան-
զի լուսով քո տեսանեմք զոյս : Ապա եթէ ոչ
այսոքիկ հաճոյ թուեսցի քումդ աստուածպե-
տական իշխանութեանդ, զոր և կամեսցիս՝ այն
իրրե յԱստուածուստ պարգեւ համարեալ է
մեզ. ո՞չ լեր փոխանն Աստուծոյ :

ՎԵՐՋ

ՄԱՆՈՒՐՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԻՆ, ՅԵՐԵՍ 7.

« Անի քաղաքի Մայր եկեղեցիէն կէս ժամ հեռու
ընդ հարաւակողմն ՚ի ձորամիջի լրբեւ զեզու երկարե-
ցեալ ՚ի վերայ Ախուրեան գետոյ և բարձրացեալ գըժ-
ուարընթաց ճանապարհաւ ՚ի վերայ քարաժայոի գոյ
վանք մի զոր Տաճիկքն Ղըշ շալէն : Այս
վանիցս ՚ի հիւսիսակողման յորմն փոքրիկ լուսամուտ մի
կայ քառանկիւնի կարմիր քարի վերայ : Հրմունքն գե-
ղեցկաձեւ զարդարեալք, և ՚ի մէջ յամենայն կողմանս
անկեանց խորշուաւոր գրեր » և :

(Կոյուղու լուսաւոր 1848. Զօրբորդ տարի. թիւ 146.)

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բարեյիշատակ ԱՐԴՈՒ Նիկողոս Հովուեան որ իւր
ազգասիրութեամբն ու տաղանդավոր չառերուն ծանօթ
է, և ոչ նակաւ աշխատութիւն տուած է ի արդիւզի
Ներսէսեան Վարժարանի յառաջդիմութեամել համար,
և որ վախճանած է 'ի 1853ին, սա ինքն իւր քար-
մանալի հանճարով աշխատած է բացատրել այս ծած-
կաբանութիւնները. այլ եթէ ոմանք ըստ ավենապնի
գոհացուցիչ չհամարին, պէտք է նկատեն որ ինքն
առաջին անգամ բացատրած է զանոնք ժամանակա-
կից պատմութեանց համաձայն, ուստի և ճիշդ կը հա-
մարուին ըստ ամենայն հաւանականութեան, քանի որ
անոր հակառակը բացատրող մ'ալ չկայ:

Կարելի է առարկել թէ առաջին ծածկաբանու-
թեան Ա. իմաստը բոնազրուեալ է, քանզի անոր
սկզբնատառերը պատկերին մէջէն առնուած է, ոչ
կարգաւ՝ այլ խառն 'ի խուռուն. սակայն քանի որ ա-
զիւսակին ամեն մէկ երեք տառերը առանձինն իրենց
բացատրութիւնը, հաշիւն ու իմաստն ունին, յօրի-
նողին համար անկարելի կ'ըլլար Ա. իմաստին սկզբ-
նատառերը կարգաւ շարել և միանգամայն միւս ի-
մաստները հաշուի բերել, ուստի և ստիպուեր է
նոյն սկզբնատառերը՝ ցրիւ և յետագայ հաշիւներուն
համեմատ զետեղել պատկերին մէջ :

Իսկ երկրորդ ծածկագրութեան բացատրութեանց
մէջ «քառասունք» ըսուածը ճիշդ քառասուն օր չպիտի
իմացուի (տե՛ս երես 34.) , քանզի այն ատեն ի՞նչպէս
կարելի է Ց օրուան մէջ «չորրորդ քառասունք» ը
զմարել (տե՛ս երես 35.) . այլ «քառասունք» ըսելով
պէտք է իմացուի սահմանեալ ժամանակ մը աղօթել
ինչպէս որ սովորաբար կ'իմացուի այժմ «քառասունից»
ըսելով: Գուցէ այս տեղ «քառասունք» ը՝ որոշեալ

միջոցի մը մէջ 40 անդամ աղօթել նշանակէ , և յայնաժամ կարելի է 8 գրուան մէջ լրացնել : իսկ եթէ այս զիտովութիւններն ուղիղ չեն , յայնժամ նոյն բացատրութեան Դի յօդուածին վերջի մասն աւելորդ է :

Փափաքելով յառաջ բերել աստ այն ծածկագիր նուսխային (գեղագրին) օրինակը զոր շէ բացատրեր Նւ Հպիւեան այն պատճառաւ թէ զործածութիւնը մէժ աշխատութեան և ծախութիւնը կարօտէ . (տեսյեր 29.) բայց Հայաստան լրագրոյ նշանակեալ թուոյն մէջ այն ծածկագրութիւնը շգտանք . հետեւաբար նոյն լրագրին միւս թիւերուն մէջ բնտուելով՝ յետագայ մէկ քանի խօսքերը գտանք և զորս կը նշանակեմք աստ , գուցէ ասոնցմէ երրորդն ըլլայ այն նուսխան : Ասոնց առաջինը բոլոր գրով իսկ միւսները ինչպէս և նօվհատէի բառոք նօտր գրով գրուած էին . բայց քանզի նոյն ատեն մանաւանդ արձանագրութեանց համար նօտր գրեր շէին գործածուեր , կը կարծուի թէ միւս խօսքերէն որոշելու համար՝ հրատարակողը այնպէս նշանակած ըլլայ . քանզի և այս բառերն ալ պարբերութեանց վերջերը գրուած էին՝ իբր ստորագրութիւն :

Պառող գրիչ . 'ի Հայաստան լրագիր . թիւ 127.

Մէջնոր էրէւ . » » » 149.

Խոցորեղ էրէւ է ուր . » » » 163.

Ինընէ էրէւ . » » » 172.

Զասոնք բանասէր և հետաքննին ազգայնոց ուշադրութեանը ներկայացընելու առթիւ հարկ է ըսել թէ՝ ևս առաւել չնորհակալ պիտի ըլլայինք եթէ բարեյշատակ Նւ Հովուեան այն նուսխան ևս բացատրած ըլլար . քանզի վնասը ոչինչ էր կամ նուազ , եթէ այս ներկայ դարուս մէջ գտնուէր ալ մէկը որ մեծ աշխատութեամբ ու ծախութիւն զանիկայ փորձելու ձեռնարկէր , մինչդեռ խիստ մեծ էր օգուտը , եթէ ասով մեր նախնեաց գիտութեան վրայ տեղեկութիւն մը ևս

ստանայինք որուն խիստ պէտք ունիմք : Կարծես մեր
մատենագրութեան ճակատագիրն է եղած, որ 'ի սկզբ-
քանէ և այսր միայն կրօնական ու չոր պատմական
տեղեկութիւններէ զատ ամեն ինչ այլ և այլ նկատմամբ
իրը աւելցրդ համարուին 'ի գիր արձանանալու :

Ն. Հ. (Նիկողոս Հովուեան) ստորագրութեամբ
հետեւեալ արձանագիրը և անոր բացատրութիւնը ևս
գտանք, Մեծ. Արքահամ Մուրատեանցի խմբագրու-
թեամբ երբեմն 'ի Նիկոմիզիա հրատարակուած Հայ-
րենասէր լրագրոյն մէջ (15 Մայիս 1852. թիւ 49.), և
զոր կ'ընդօրինակեմք աստ . բացատրութեանցս հե-
ղինակին սոյնօրինակ գործերը տետրիս մէջ ամիսո-
փելու նպատակաւ, սակայն առանց որոշ գիտնալու
թէ արդեօք ի՞նքն յօրինած է, թէ չէ արձանագրու-
թիւն մ'է զոր գտած ու բացատրած է . թէ պէտ և
առաջին կարծիքը աւելի հաւանական է :

ԱՐՑԱՆԱԳԻՒԹ Ի ՄԵԾՆ ՄԵՍՄՈՒԲ

Ենոքհաստ էն եէիո հնարեաց Մեւրոէ գէր Հոյոց :

Այս արձանագրութիւնը երեսուն և վեց գրերէ
բաղկացեալ է, և բառից նախատառ և վերջատառ
զրերուն հաշիւը երեսուն և վեց թիւ կ'ընէ, միայն
տառից սկզբնաթիւը հաշուելով առանց զրոյի . զ.

Թիւ սկզբնաշար տառից	Թիւ վերջաշար տառից
Հ — 5	Ք — 9
Է — 7	Ն — 4
Ե — 5	Թ — 4
Ւ — 7	Զ — 6
Մ — 2	Բ — 2
Գ — 5	Ռ — 5
Կ — 7	Զ — 6
	36

Հին դարերու մէջ կարգ մը մարզիկ զիտութեան մենավաճառք՝ իրենց գիտածները ծածկաբանօրէն կամ այլաբանօրէն իրարու միայն կ'աւանդէին խորհրդանոր նշանագրերով։ Այբուբենից գիւտէն յետոյ նոյն տառերը թիւերու և կամ թիւերը տառերու վերածելով տեսակ մը խորհրդաւոր զրութիւն ևս սկսաւ, որ մինչեւ եւրոպական գրականութեան մէջ մուտ գտաւ։ Բայց ծածկագրութիւնք թէ՛ իբր ՚ի ցոյց հանճարոյ և թէ՛ աստեղագիտական, գուշակական և հմայական և այլ իրական կամ երեւակայական գիտելեաց համար ևս գործածուելով, և հետզհետէ տգէտներու ձեռօք աղստաղելով՝ անվերծանելի վիճակի մը հասած է, և խարեբայներու ձեռքը տեսակ մը գործիք եղած է՝ ժողովուրդը կողմատելու։

Մածկաբանութեանց նշանագրի տեսակներուն Հայերէն գրոց մէջ զ տնուածներն են սովորաբար՝ Արժ. ՚ի Վրուանձտեանցի հրատարակած թորոս աղբար անոնց գրքին վերջը ցուցուածներն և կամ անոնց նմանները՝ ախտարական գրեանց մէջ։ Տառերով ծածկագրութեան համար, որ հաւանականաբար Արաբացւոցմէ մտած է Հայոց մէջ, չատ յարմարած է Հայոց տառերու ՅՅ թիւը։ Քանզի յունական և լասինական տառերով եղածներուն վրայ ալ փակագրեր և գլխագրեր աւելցուելով՝ ՅՅ տառի վերածուած են։

Մածկաբանական գրուածք կը համարուին նուսախաները, որք սպեղանիի կամ օձանելի և ըմպելի դեղերու գեղագրեր են եղած ՚ի սկզբան և դեռ այսօր տգէտ ամբոխը ասոնցմէ թժշկութիւն կը յուսայ, թէ և փոխանակ անոնց պարունակած դեղերուն, (որք եթէ գիտոցուին ալ, այսօր ընդհանրապէս կարեւորութիւն մը չունին), նոյն իսկ զրուած թղթիկները (նուսինէ) ծխելով և կամ անոնց ջուրը խմելով կամ անով օծուելով։

Թըլըւցները՝ ծածկաբանօրէն գրուած իմաստներ
պէտք էին պարունակել . և շատ հաւանական է թէ
առ անի յափշտակողաց կամ առ ազահութեան գանձ
թագուցանելու և կամ կարեւոր խորհուրդ մը կամ
արուեստ մը իրը գաղտնիք մասնաւոր ոմանց միայն
իմացընելու համար գործածուածէ . (ինչպէս և ցարդ
կը գործածուի այսօրինակ որպիտագայից մէջ , մանա-
ւանդ կեռագրաց համբոր) մինչև ցայսօր ևս մա-
նաւանդ արեւելցի ուածիկն որ և իցէ իրեն ան-
հասկանալի գիր կամ նշանը իր համարի իրը բանալի
գաղտնի արուեստի մը կամ՝ թուգուցեալ գանձի մը :
Վեցհազարեակ լուսածն ալ այս տեսակ ծածկաբա-
նական և հաշուական գիտութիւն է եղած երբեմն :

Իսկ համացին կը պարունակէ տեսակ մը իմանալի
կամ անիմանալի հատուածներ իրը աղօթք կամ սրբա-
կան բանք , և շատ անգամ ալ նուսխայ կամ թըլը-
սըմ ընտածները՝ թէ՛ նշանագրերով և թէ՛ տառերով
որք ՚ի պահպանութիւն անձին կը պահուին իրը բըժ-
ժանք : Արդեօք սա չէ՞ հմայիլ կամ հմայ :

Ցետրիս հրատարակման առթիւ այս համառօտ
տեսութիւնն ընենք յետոյ հարկէ ըսկէ ի է ներկա
յայտնաբանակու զարու մէջ երբ ճրագն ընչ ուր
ուանաւ չպահելու պահանջմը մարմնացած է ու
բաղգաբար , իրաւ ! որ մարդու իկ այլ ևս պէտք չըս
նին ծածկաբանութեալ ց) տակայն անօդըւոտ չէ ։
հետաքննին և հմեւա անձինք ուսունք այս նիւթը ու
շադրութեան առնուն և այսու յաջոպի՞ բացատրե
այս տեսակ գրուածնուր , որով և հին գարնըրու զիւ-
լոյս մը կը սփռեն , ինչպէս շատ մը եւրոպացի գիտն-
նման աշխատած է և սրբանայիշատակ նո Հովուեան
երանի՝ թէ քանի մը կանոն ևս ումնդէր , ինչպէս
մէկ երկու նշմար ուուած է յել ևս 9. 53. 59:

